ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 հունվարի 2026 թվականի թիվ 3–Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 3-Ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 1-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ մասի 5-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենիքի 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 18-րդ հոդվածների, «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության 2014 թվականի հուլիսի 3-ի «Պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 737-Ն որոշման 10-րդ, 12-րդ, 13-րդ, 17-րդ, 18-րդ և 20-րդ կետերի դրույթները և Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2023 թվականի հոկտեմբերի 31-ի «Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 706-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 1080-Ա որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի 2026 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Հաստատել 2026 թվականի ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձի բնականոն աճի հաշվարկը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2025 թվականի հունվարի 3-ի <<Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի 2025 թվականի հաստիքացուցակը հաստատելու մասին>> թիվ 1-Ա որոշումը:

Հ.ՂԱԼՈՒՄՅԱՆ

2026-01-07 08:39:25 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2026թ. հունվարի 5
ք.Իջևան